Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար պարոն Ս. Աթանեսյանին

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.
Արսեն Նիկոյան, Միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.
Շվեյցարիայի Համադաշնություն, քաղաք Ժնև, 2023 թվականի հոկտեմբերի 26-ից 29-ը:

3. Հրավիրող կողմը.
ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր (UNEP) :

4. Գործուղման նպատակը.
Մասնակցություն 2023 թվականի հոկտեմբերի 27-ին կայնալիք պլաստիկ աղտոտման վերաբերյալ միջազգային իրավաբանորեն պարտադիր գործիք մշակելու նպատակով ձևավորված միջկառավարական բանակցային կոմիտեի (ՄԲԿ) տարածաշրջանային խորհրդակցություններին:

5. Քննարկված թեմաներ.
ՄԲԿ տարածաշրջանային խորհրդակցությանը ողջույնի խոսքով հանդես եկան ՄԲԿ գործադիր քարտուղարն ու UNEP-ի Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի տնօրենը: Հանդիպման մասնակիցներին ողջունեց նաև ՄԲԿ նախագահը՝ ներկայացնելով նաև ս.թ. նոյեմբերի 13-ից 19-ը Քենիայի մայրաքաղաք Նայրոբիում կայանալիք պլաստիկ աղտոտման վերաբերյալ միջազգային իրավաբանորեն պարտավորեցնող գործիք (փաստաթուղթ) մշակելու նպատակով ՄԿԲ երրորդ նիստին սպասվող քննարկումների հետ կապված հարցեր: Հանդիպմանը առցանց ձևաչափով մասնակցում էր նաև շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, պլաստիկ աղտոտման վերաբերյալ միջազգային իրավաբանորեն պարտադիր գործիք մշակելու նպատակով ձևավորված միջկառավարական բանակցային գործընթացի ազգային համակարգող Մերի Հարությունյանը:

Հանդիպմանը ՄԲԿ քարտուղարության կողմից տեղեկատվություն տրամադրվեց պլաստիկ աղտոտման վերաբերյալ միջազգային իրավաբանորեն պարտավորեցնող գործիքի նախնական նախագծի վերաբերյալ, իսկ ՄԿԲ անդամները կարծիքներ են

փոխանակել նախնական նախագծի (որը նախատեսվում է քննարկել Նայրոբիում կայանալիք ՄԲԿ 3-րդ նիստի ընթացքում) տեքստի վերաբերյալ, առ այն, որ՝

- նախնական նախագիծը լավ հիմք է հետագա աշխատանքի համար,
- պատրաստակամ են աշխատելու պլաստիկ աղտոտման «ողջ կյանքի ընթացքում» մոտեցման (life cycle approach) և թափոնների կառավարման համակարգերի բարելավման ուղղությամբ,
- պատրաստակամ եմ քննարկելու ընդլայնված արտադրողի պատասխանատվության (EPR) և ազգային գործողությունների ծրագրերի հետ կապված մանրամասները,
- նախնական նախագծում կան որոշ թեմաներ, որոնք ավելի մանրակիրթ քննարկման անհրաժեշտություն են պահանջում, մասնավորապես՝ զարգացող երկրներում քիմիական նյութերի, կամ միկրոպլաստիկայի, կամ թափոնների կառավարման մեխանիզմները և այլն:

Հանդիպման ընթացքում ՄԲԿ անդամների կողմից կարևորվեց նաև անցումային տնտեսություն ունեցող երկրների համար ֆինանսական աջակցության և/կամ կարողությունների զարգացման հասանելիությունը:

6. Հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածություններ.

ՄԲԿ համանախագահների կողմից կոմիտեի անդամներին առաջարկվեց տարածաշրջանային ընդհանուր դիրքորոշում ձևավորելու և ՄԲԿ 3-րդ կայանալիք նիստին ընդառաջ տարածաշրջանային հանդիպմանը քննարկելու նպատակով ներկայացնել համապատասխան առաջարկներ:

Արսեն Նիկոյան
01.11.2023թ.